

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նալբանդյան համայնքի 2011 թվականի հուլիսի 14-ին կայացած ժողովին մասնակցում են համայնքի 120 անդամներ:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի 2011 թվականի 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների մասին ժողովում ծավալուն ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար՝ Գ. Մկրտչյանը, ով մանրամասնորեն ներկայացրեց կատարված և ապագայում կատարվելիք աշխատանքները:

Նա, մասնավորապես նշեց, որ համայնքի ղեկավարը և աշխատակազմը, ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքով և այլ օրենքներով ու իրավական ակտերով, իր գործունեության հիմքում ունենալով համայնքի զարգացման քառամյա ծրագիրը, որոշակի աշխատանքներ են կատարել համայնքի առջև ծառայած սոցիալ-տնտեսական և մշակութային խնդիրները իրականացնելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավիրվել է ավագանու 7 նիստ, որից՝ 2 հերթական և 5-ը՝ արտահերթ: Այս նիստերում քննարկվել են համայնքի վերաբերյալ բազմաբնույթ հարցեր և ընդունվել համապատասխան որոշումներ: Այսպես՝ համայնքի սեփականության հողատարածքների օտարման 2 հարց, համայնքի ենթակայության „Ուսուցչի տան,, օտարման 1 հարց, տարելերջյան գույքագրման վերաբերյալ 1 հարց, համայնքի բյուջեի փոփոխություն կատարելու վերաբերյալ 1 հարց, գյուղատնտեսական գործունեության վերաբերյալ 1 հարց, հակակարկտային կայանների տեղադրման համար տարածքների հատկացման վերաբերյալ 1 հարց: Ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու վերաբերյալ՝ 5 հարց, սոցիալապես անապահով ընտանիքների ավտոմեքենաների գույքահարկի զիջման վերաբերյալ՝ 2 հարց:

Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները նպատակաուղղված են եղել համայնքի առջև ծառայած խնդիրներին լուծումներ տալու և ապահովելու համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են ներհամայնքային, ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման և բարենորոգման աշխատանքներ, առանձնակի ուշադրություն է դարձվել համայնքի սանիտարական վիճակին, այդ նպատակով համայնքի „Բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ի հետ իրականացվել են շրջայցեր, տրվել կոնկրետ հանձնարարականներ, որի շնորհիվ համայնքում ստեղծվել է բարվոք սանիտարական վիճակ:

Համայնքում գործում է համայնքային ենթակայության „Մանկապարտեզ,, և „Երաժշտական դպրոց,, ՀՈԱԿ-ները, որտեղ բացի համայնքի երեխաներից, հաճախում են նաև հարևան գյուղերի երեխաները:

Սոցիալապես անապահով ընտանիքների խնդիրը գյուղապետարանի ամենօրյա հոգածության խնդիրներից է: Մշտական ուշադրության կենտրոնում են բազմանդամ ընտանիքներն իրենց խնդիրներով, որոնք

գյուղապետի հմար ունեն առանձնահատուկ նշանակություն: Սոցիալապես անապահով ընտանիքների ֆինանսական դժվարությունները մեղմելու նպատակով համայնքի 25 ընտանիքների համայնքային բյուջեից հատկացվել է դրամական օգնություն՝ 1.5 մլն դրամ, իսկ սոցիալապես անապահով 10 ընտանիքների գիջվել է ավտոմեքենաների գույքահարկը:

Համայնքի ղեկավարի աշխատակազմը սերտ կապերի մեջ է դպրոցի հետ, որին թե բարոյական և թե ֆինանսական աջակցությունը եղել է առաջնահերթ խնդիր: Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցի գույք ձեռք բերելու նպատակով բյուջեից տրամադրվել է 1.3 մլն դրամ:

Գյուղապետարանի գործունեության մեջ մեծ տեղ է տրվել քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների քննարկման հարցերը: Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի մոտ ընդունելության են եղել շուրջ 250 քաղաքացի, որոնց կողմից բարձրացված հարցերին հնարավորինս լուծումներ են տրվել, իսկ վերադաս կազմակերպությունների հետ կապված հարցերին համապատասխան ձևով ընթացք է տրվել:

Գնալով բարձրանում է ավագանու վարկն ու հեղինակությունը բնակչության շրջանում, քանի որ ավագանուն ուղղված յուրաքանչյուր հարց հետևողական աշխատանքների շնորհիվ գտնում են իր լուծումը: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ ավագանու համար հատկացված է առանձին աշխատասենյակ և սահմանված է ավագանու յուրաքանչյուր անդամի ընդունելության օրերը:

Գյուղապետարանի աշխատանքների հետևողական և սկզբունքային աշխատանքների հետևանքով նվազել են աղանդների թիվը համայնքում:

Երիտասարդության հանգստի և ժամանցի կազմակերպումը համայնքի առանձնահատկություններից է, հանգստի համար համայնքի զբոսայգում կազմակերպվել է հանգստի անկյուն, որտեղ իրենց հանգիստն են անցկացնում գյուղի երիտասարդների զգալի մասը:

Գյուղապետարանը իր ուշադրության կենտրոնում է պահում համայնքի մշակութային կյանքի աշխուժացման խնդիրը, սակայն մշակույթի տան անմխիթար և վթարային վիճակը թույլ չի տալիս: Ուստի՝ մեր առաջնահերթ խնդիրը ապագայում մշակույթի տան շենքի հիմնարար վերականգնողական աշխատանքներն են, որը առանց դրսի ֆինանսական աջակցության, անհնար է: Մշակույթի տան անմխիթար վիճակի պատճառով լիարժեք չի գործում նաև գյուղի գրադարանը, հիմնախնդիրներից է նաև նոր մանկապարտեզի շենք ունենալը, ինչպես նաև ավարտին հասցնել նոր թաղամասերի խմելաջրի ցանցերի անցկացման աշխատանքները:

Այս օրերին արդեն սկսվել են և շարունակվում են գյուղ.մթերքների իրացման աշխատանքները, ուստի՝ գյուղապետարանը հետևողականորեն բարձրացնում է բյուջեի կատարման հետ կապված հարցերը: Բոլոր հիմքերը առկա են՝ բյուջետային տարին փակելու բարձր ցուցանիշներով և նոր ծրագրերի իրականացմամբ:

14 հուլիսի 2011թ

Գ. Նալբանդյան